ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը, որպես տարածաշրջանային դերակատարության կրթական և գիտամշակության հաստատություն իր առաքելության շրջանակներում իրականացնում է աշխատաշուկայում պահանջված կրթական ծրագրեր՝ կիրառելով ուսուցման ժամանակակից եղանակներ և որակի ապահովման կառուցակարգեր և տարածաշրջանը համալրում է անհրաժեշտ մասնագետներով, նպաստում է մշակութային կյանքի զարգացմանը:

Մասնաճյուղը, ամփոփելով 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի արդյունքները և հիմք ընդունելով Մայր բուհի 2021-26թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը, 2021թ.-ի սեպտեմբերից-դեկտեմբեր ամիսներին մշակել է մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը, որը հաստատվել է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում: Ապա աշխատանքային խումբը 2022թ.-ի հունվար-մարտ ամիսներին մշակել է ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցը, որի հիման վրա կազմակերպվել է Մասնաճյուղի ստորաբաժանումների և ուսանողական կառույցների գործունեությունը:

Մասնաճյուղն իր աշխատանքի արդյունքները գնահատելու և հանրությանը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին հրապարակում է իր Գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմը, որոնց հիման վրա էլ կազմվել է այս հաշվետվությունը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Մասնաճյուղը տարածաշրջանում պահանջված բարձրագույն ուսումնական հաստատություն է և ունի դիմորդների կայուն հոսքը: Ըստ կրթական աստիճանների և ուղղությունների 2021թ.-ին մասնաճյուղն ունեցել է 394 դիմորդ, որը վերջին տարիների համար գրեթե կայուն ցուցանիշ է, այդ թվում առկա բակալավրիատում՝ 242, հեռակա բակալավրիատում՝ 135 և հեռակա մագիստրատուրայում՝ 17: Առկա ուսուցման դիմորդների **96.3%-ը** Տավուշի մարզից են, ինչը պայմանավորված է մարզի հասարակության շրջանում Մասնաճյուղի ունեցած բարձր հեղինակությամբ և վարկանիշով, քանի որ հաստատությունը պատվով է կատարում իրեն վերագրված դերը սահմանամերձ Տավուշում՝ նպաստելով նրա գիտական, մշակութային և սոցիալ-տնտեսական առաջընթացին:

Ընդունելության քննությունները հաղթահարել է դիմորդների **81%-ը**, որը բավականին լավ ցուցանիշ է, ընդ որում առկա ուսուցմամբ բակալավրիատ ընդունվել է

դիմորդների **79.3%-ը** (192-ը), հեռակա ուսուցմամբ բակալավրիատի դիմորդների **83.7%-ը** (113-ը), մագիստրատուրայի դիմորդների **88%-ը** (15-ը):

Մասնաճյուղը մասնագիտական կողմնորոշման նպատակային աշխատանքներ է իրականացնում Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի շուրջ 50 ավագ և միջնակարգ դպրոցներում, ներկայացվում են ԵՊՀ ԻՄ-ի կրթական ծրագրերը, տրվում է մասնագիտական խորհրդատվություն 11-րդ և 12-րդ դասարանի աշակերտների համար: Կազմակերպվել են ակնարկային դասախոսություններ և ճանաչողական այցեր դպրոցների աշակերտների համար: Նմանատիպ հանդիպումների արդյունքների վերլուծությունից հետո մեր կողմից գնահատվում են բարձրագույն կրթության նկատմամբ ներկա և հաջորդ տարիների շրջանավարտների դրսևորած մասնագիտական հետաքրքրությունները և Մասնաճյուղի մրցակցային առավելություններն ու հնարավորությունները:

Մասնագիտական կողմնորոշման առումով կարևոր գործընթաց է Մայր բուհի նախաձեռնությամբ առարկայական օլիմպիադների անցկացումը մարզերում: «ԵՊՀ օլիմպիադա-2022»-ի շրջանակներում Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններից մասնակցության հայտ է ներկայացրել 30 դպրոցի 12-րդ դասարանի 300 աշակերտ, որոնցից 11 առարկաներից օլիմպիադային մասնակցել է 253-ը, նրանցից 9 առարկաներից 2-րդ փուլ է անցել 49 աշակերտ (մասնակիցների՝ գրեթե 20%-ը): ԵՊՀ-ում կազմակերպված 2-րդ փուլի արդյունքներով մեկ աշակերտ արժանացել է **I կարգի դիպլոմի**, մեկ աշակերտ՝ **III կարգի դիպլոմի**, **19 աշակերտ գովասանագրի**՝ 7 առարկայից: Այս բանիմաց աշակերտները գրեթե բոլորը դարձել են մասնաճյուղի ուսանողներ:

Մասնաճյուղի մասին իրազեկվածության ապահովման և դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն աջակցելու համար Մասնաճյուղում հաճախակի կազմակերպվում են տարբեր միջոցառումներ և հանդիպում-քննարկումներ դպրոցների աշակերտների մասնակցությամբ: Այդ միջոցառումների շարքում պետք է կարևորել 2022թ. ապրիլին մասնաճյուղում կայացած **«ԴիջիԿոդ»** կիրառական **ծրագրավորման պատանեկան ամենամյա մրցույթը,** որին մասնակցել են Տավուշի և Գեղարքունիքի մարզի Արմաթ ինժեներական լաբորատորիաների աշակերտները: Այդ մրցույթի հիմնական նպատակն է խրախուսել և զարգացնել դպրոցականների ալգորիթմական մտածողությունը, բացահայտել տաղանդավոր պատանիներին և հնարավորություն տալ զարգացնել ստեղծագործական ունակությունները, իսկ Մասնաճյուղի նպատակը՝ նրանց իր պոտենցիալ դիմորդներ դարձնելն է:

Մասնաճյուղի ռազմավարության հիմնաքարն իր **ուսանողների համար** բարձրորակ և մատչելի կրթության ապահովումն է: 2021-22 ուստարում մասնաճյուղում սովորել է **1186** ուսանող (01.04.2022թ.-ի դրությամբ, նախորդ ուստարում՝ 1288,), այդ թվում առկա ուսուցմամբ՝ **562-ը**, որը կազմում է ուսանողական համակազմի **47.4%-ը**, հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ **611-ը** (51.5%-ը), մագիստրատուրայում՝ **13-ը**: Պետք է

նշել, որ 2021-22 ուստարում ուսանողների թիվը նախորդ ուստարվա համեմատ նվազել է, ինչը պայմանավորված է հիմնականում հեռակա ուսուցման ընդունվածների ընդհանուր թվի նվազմամբ՝ պայմանավորված ընդունելության պահանջների շարունակական խստացմամբ:

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական ուսանողական համակազմում **86.4%** է: Այս ցուցանիշը վերջին տարիներին իջել է, ինչը նույնպես պայմանավորված է հեռակա ուսուցման համակարգ ընդունելության ծավալի նվազմամբ:

2021-22 ուստարում մասնաճյուղ են դիմել ՄՄՈՒՀ-երի գերազանց առաջադիմությամբ **29** շրջանավարտներ, նաև 4-ը տեղափոխվել են այլ բուհերից, իսկ մասնաճյուղից այլ բուհեր տեղափոխվել են ընդամենը 5-ը:

2021-2022 ուստարում գրանցված առաջադիմության (լուծարքային շրջանից առաջ) միջին տարեկան ցուցանիշը մասնաճյուղում առկա ուսուցմամբ կազմել է **71.9%,** հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ **34.43%,** մագիստրատուրայում՝ **84.6%:**

2021-2022 ուստարում բակալավրիատի ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել է **258** ուսանող (79-ը՝ առկա ուսուցման համակարգում, 155-ը՝ հեռակա ուսուցման բակալավրիատում, 24-ը՝ մագիստրատուրայում), նրանցից առկա ուսուցման շրջանավարտների **100%-ը**, հեռակա ուսուցման բակալավրի՝ **92.9%-ը** և մագիստրատուրայի՝ **95.8%-ը** ստացել են դրական գնահատականներ: Այստեղ պետք է նշել, որ շրջանավարտներից **34-ը** (14%-ը) մասնաճյուղն ավարտել է գերազանց առաջադիմությամբ:

Նշենք, որ հաշվետու ուստարում «Ընդհանուր մանկավարժություն» մասնագիտության «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» հեռակա ուսուցման մագիստրոսական կրթական ծրագիրը տվել է իր առաջին շրջանավարտները:

Մասնաճյուղի ուշադրության կենտրոնում առաջին հերթին, իհարկե, ուսանողների կրթական ձեռքբերումներն են, ուսումնառությունից նրանց բավարարվածությունը և հետագա մասնագիտական հաջողությունները: Դրանց հիմքում կրթության բովանդակությունն է, կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները, և իհարկե, տարատեսակ փորձառությունների կազմակերպումը՝ ըստ նշակված կրթական ծրագրերի:

Հաշվետու ուստարում ուսումնառություն է կազմակերպվել բակալավրի **20** առկա և հեռակա կրթական ծրագրերով և **1 հեռակա** մագիստրոսական կրթական ծրագրով:

Բարելավման նպատակով 2021-2022 ուստարում մոնիթորինգի է ենթարկվել բակալավրի **4** կրթական ծրագիր, 2022թ.-ի հոկտեմբերից ընթացքի մեջ է ևս 3 ծրագրի մոնիթորինգը: Վերանայվել են բակալավրի 11 առկա և 6 հեռակա ուսուցման կրթական ծրագրերը և մագիստրոսական ծրագիրը: Հաշվետու ուստարում վերանայման ժամանակ բոլոր կրթական ծրագրերում ներդրվել են նաև դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ (հաստատված ԳԽ 16.06.2022թ.), որոնց ձգտում ենք հետևել կրթության որակի բարելավման նպատակով:

Ուսանողների ինքնուրույն աշխատելու ունակությունները և ստեղծագործական մտածողությունը զարգացնելու, կրթական և ուսանողների ձեռքբերումների գնահատման գործընթացում դասախոսների ազատ գործունեությանն աջակցելու և խթանելու համար ուսումնական գործընթացի կազմակերպման շրջանակներում Մայր բուհի կողմից առաջարկվել և մասնաճյուղում ներդրվել է ուսանողների գնահատման նոր բազմագործոն գնահատման համակարգ (Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ, ԳԽ 30.04.2022)։

Եվ քանի որ նոր մոդելում կարևորվել և գնահատման բաղադրիչ է դարձել ուսանողների ինքնուրույն աշխատանքների գնահատումը, ապա հստակեցվել են ինքնուրույն աշխատանքների կազմակերպման գործընթացը և դրանց գնահատման չափանիշները՝ ներդրվել է «Ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման կարգ»-ը (ԳԽ 30.04.22)։

ԵՊՀ ռեկտորատի առաջարկով Մասնաճյուղում 2022թ.-ի հունվար-մարտ ամիսներին ուսումնասիրվել են մի քանի եվրոպական բուհերի մոդուլային կրթական ծրագրերը, նրանց կառուցվածքն ու առանձնահատկությունները, մասնաճյուղում նմանատիպ ծրագրերի ներդրման հնարավորությունները։ Կատարված առաջարկների հիման վրա մոդուլայինի պահանջներով կազմվել են և 2022-23 ուստարուց ներդրվել են «Պատմություն», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերը։

Նոր կրթական ծրագրեր ներդնելու և աշխատաշուկայի պահանջարկին համահունչ շարժվելու համար Մասնաճյուղը պարբերաբար իրականացնում է ՀՀ և առանձնապես Տավուշի մարզի աշխատաշուկայի ուսումնասիրություն։ Այդ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մասնաճյուղում վերջին տարիներիներին ներդրվել են բակալավրի 3 և մագիստրոսական 1 ծրագիր («Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»)։ Արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունների և Տավուշի մարզի հասարակության շրջանում անցկացրած առցանց հարցման արդյունքների հիման վրա Մայր բուհի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի աջակցությամբ ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել հեռակա ուսուցմամբ «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի լիցենզավորման հայտ։ Ստացվել է նախարարի դրական որոշումով հրամանը, և 2023թ.-ին մասնաճյուղը ընդունելության կկատարի երկրորդ մագիստրոսական ծրագրով։

Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման, կրթական վերջնարդյունքների ձևավորման և ուսանողների մասնագիտական, պրակտիկ և հետազոտական կարողությունների զարգացման գործում կարևոր են իրականացվող տարատեսակ պրակտիկաները և դրանց շրջանակներում կազմակերպվող բազմաթիվ ճանաչողական այցերը (հաշվետու ուստարում՝ մեկ տասնյակից ավել) ՀՀ տարբեր մարզերի հնագիտական և պատմամշակութային վայրեր, զբոսաշրջային դեստինացիաներ, հյուրատներ, կազմակերպություններ և ձեռնարկություններ, կիրառական արվեստի և

դիզայնի ոլորտում գործող ստուդիաներ և այլն: 2021-22 ուստարվա ընթացքում, ըստ բակալավրի և մագիստրատուրայի ուսումնական պլանների իրականացվել է 40 պրակտիկա (ուսումնական, արտադրական (մանկավարժական), գիտամանկավարժական): Ուսումնական պրակտիկաների կազմակերպման համար հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղը պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների հետ ունեցել է ստորագրած համագործակցության 11 հուշագիր, 1 համաձայնագիր և 35 պայմանագիր, որոնցից 4 պայմանագիրը և 3 հուշագիրը ստորագրվել են հաշվետու ուստարում:

Ուսումնական, արտադրական և գիտամանկավարժական պրակտիկաներին հաշվետու ուստարվա 2 կիսամյակների ընթացքում մասնակցել է **319** ուսանող: Նշենք, որ արտաքին շահակիցներն առանձնապես բարձր են գնահատել (միջին գնահատականը՝ **4.7**) մանկավարժական պրակտիկային մասնակցած մեր ուսանողների գիտելիքները, ստեղծագործական մոտեցումները, պատասխանատվությունը, ուսումնառության ժամանակակից մեթոդներ կիրառելու ունակությունները և երեխաների հետ շփվելու կարողությունները:

Նշենք, որ ուսանողների, նաև շրջանավարտների մասնագիտական որակները բարձրացնելու և ապագա կարիերային աջակցելու համար Մասնաճյուղը բացի պլանային պրակտիկաներից նրանց իրազեկում և ներգրավում է նաև տարբեր ծրագրերում: Օրինակ, «Կլոր սեղան» հիմնադրամի կողմից առաջարկված պրակտիկայի ծրագրին դիմել է ԵՊՀ ԻՄ-ի «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի **երկու շրջանավարտ, նույն կրթական ծրագրի** 4-րդ կուրսի 3 ուսանող կամավորագրվել են Տահույս ՀԿ-ում գործող ծրագրում և անհրաժեշտ տեղերում իրականացնում են սինխրոն թարգմանություններ: Նույն ծրագրի շրջանակներում Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողներից ձևավորված ուսանողական խումբը **Տավուշի թեմում** կավագործություն է սովորում:

ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Մասնաճյուղի ռազմավարական առաջնահերթություններից է համալսարանական միջավայրի զարգացումը՝ ձգտելով ստեղծել անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներով ապահովված և հասանելի, ներքին և արտաքին շահակիցների ուսմանը, աշխատանքին և արտալսարանային արդյունավետ գործունեությանը նպաստող լաբորատորիաներ, ապահովելով ֆիզիկական և վիրտուալ մշտապես թարմացվող միջավայր:

- **Ենթակառուցվածքներ:** 2021-22 ուստարում Մասնաճյուղում ուսումնական գործընթացն իրականացվել է վերանորոգված և արդիականացված ենթակառուցվածքներով: Հաշվետու ուստարում իրականացվել են ուսումնական և վարչական տարածքների, մասնաշենքերի հիմնանորոգման և վերակառուցման 14,

օժանդակ տարածքների արդյունավետ օգտագործման 3 ծրագրեր, այդ թվում արդիականացվել են 14 լսարան (57-ից), ՀՕՖ-ի աջակցությամբ 1 սրահի համար ձեռք է բերվել նոր կահույք և 20 գերժամանակակից համակարգիչ և ցուցասարք, սպորտդահլիճին կից կառուցվում են հանդերձարաններ, ամբողջությամբ վերանորոգվել և բարեկարգվել է հյուրատան խոհանոցային համալիրը, բարելավվել են նրա կոմունալ պայմանները: Վերանորգվել և բարեկարգվել է Կիրառական արվեստի ֆակուլտետի քանդակի և կերամիկայի արվեստանոցները: Հաշվետու ուստարում մասնաճյուղում իրենց ամբողջ բեռնվածությամբ գործել են 5 համակարգչային սրահներ, ցուցասարքերով և համակարգչային տեխնիկայով ապահովված 12 լսարան, օտար լեզուների 3 կենտրոն և 7 արվեստանոց:

Մասնաճյուղն իր ուսանողների հետազոտական, ստեղծարար և նորարարական ունակությունների զարգացման և որակյալ կրթության ապահովման համար ձգտում է ներգրավել բարձրորակ դասախոսական կազմ, նաև գիտնականների և հետազոտողների, տաղանդավոր երիտասարդների, որոնց գիտական ներուժի զարգացման ու աջակցման համար իրականացնում է համալիր միջոցառումներ և ծրագրեր:

- **Մարդկային ռեսուրսներ**: Հաշվետու ուստարում Մասնաճյուղում ընդհանուր առմամբ դասավանդել է **173** դասախոս, այդ թվում **90-ը** հիմնական և ԵՊՀ-ից հրավիրված, **26-ը՝** համատեղությամբ և **57-ը՝** ժամավճարային հիմունքներով: Ժամավճարային հիմունքով դասավանդողների թվաքանակը փոփոխական է և պայմանավորված է կրթական ծրագրերում նեղ մասնագիտական դասընթացների առկայությամբ:

Նշենք, որ հիմնական դասախոսական կազմի **59%-ը** (90-ից 53-ը) ունի գիտական աստիճան, այդ թվում մասնաճյուղում դասավանդում են 6 պրոֆեսոր: Նաև հպարտությամբ պետք է փաստել, որ հիմնական դասախոսների մեջ մեծ թիվ են կազմում մասնաճյուղի նախկին շրջանավարտները:

Մասնաճյուղն աջակցում է իր դասախոսների մասնագիտական, մանկավարժական և տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու որակների զարգացմանը՝ իրականացնելով բազմաթիվ վերապատրաստման դասընթացներ: 2021-22 ուստարում 2017-2021թթ. կրթագիտական ծրագրի շրջանակներում մասնաճյուղում իրականացվել են վերապատրաստման **25 դասընթաց**, որոնց մասնակցել են դասախոսների 70%-ը:

Դասընթացների շարքում շատ կարևոր, պահանջված և նպատակային էր «Հետազոտական աշխատանքների պլանավորում, իրականացում, ներկայացում» վերապատրաստման դասընթացը, որի նպատակն էր աջակցել երիտասարդ դասախոսների հոդվածներ գրելու կարողությունների զարգացմանը:

Ռազմավարական ծրագրի պահանջների իրականացմանն ընդառաջ և Մայր բուհի գործընթացներին համահունչ հաշվետու ուստարում դասախոսական կազմը նախապատրաստվել է ԵՊՀ էլեկտրոնային ուսուցման Moodle համակարգով աշխատելուն, ինչի համար 2022թ.-ի մայիսին կազմակերպվել է «Moodle էլեկտրոնային

ուսուցման համակարգի կիրառման միջազգային փորձը» թեմայով առցանց վերապատրաստման դասընթացը, որին մասնակցել են մասնաճյուղի բոլոր հիմնական դասախոսները: Դասընթացը վարել են Բոլոնիայի համալսարանի մասնագետները: Իսկ մասնաճյուղն իր հիմնական դասախոսների համար առանձին խմբերով առցանց և առկա եղանակներով կազմակերպել է «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում», «Հետազոտական աշխատանքների մեթոդաբանություն» վերապատրաստման դասընթացները:

Մասնագիտական զարգացմանն աջակցելու համար դասախոսները պարբերաբար իրազեկվում են միջազգային և ներբուհական տարբեր թվային հարթակների, կրթական նորագույն ծրագրերի մասին: ԵՊՀ ԻՄ 7 դասախոս մասնակցել է ԱՊՀ երկրների ինստիտուտի կողմից կազմակերպած “Международные отношения в эпоху глобальных перемен” որակավորման բարձրացման դասընթացին: TESOL (Անգլերենի դասավանդում այլ լեզվով խոսողների համար) ծրագրին մասնակցած մասնաճյուղի դասախոսները հավաստագիր են ստացել ԱՄՆ-ում գործող “Armenian Volunteer Network” (AMVN-«Հայ կամավորական ցանց») կազմակերպության կողմից:

• **Ֆինանսական ռեսուրսներ:** Չնայած սոցիալական խնդիրներով պայմանավորված վարձավճարների հավաքագրման գործում առկա դժվարություններին, մասնաճյուղում կատարվել են անհրաժեշտ ներդրումներ, ֆինանսներ են տրամադրվել սոցիալական ծրագրերին, գիտական գործունեության և դրամաշնորհների համար և այլն: Խնայողությունների հաշվին ձևավորված 700մլն. դրամի հավասար ֆինանսական ապահովության բարձիկը մնացել է անձեռնմխելի, և վստահություն է տալիս գործընթացների պլանավորման հարցում:

Նշենք, որ 2021թ.-ին մասնաճյուղի տարեկան բյուջեն 2020թ.-ի համեմատ աճել է 12.2%-ով: 2021թ. տարեկան բյուջեի 47%-ը կազմել են վճարովի ուսուցման ծառայության եկամուտները, իսկ ահա ծախսերի ընդհանուր ծավալում գերակշռել են աշխատանքի վարձատրության ծախսերը՝ 68%: Չնայած 2022թ. հունվարից 10%-ով բարձրացել է դասախոսների աշխատավարձը, դեռևս վարչակառավարչական, տնտեսական և ուսումնաօժանդակ անձնակազմերի համար նախատեսված գումարները հավասար են պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձի հոդվածով նախատեսված գումարներին:

Ուսումնական ծախսերը 2021թ. կազմել է 48.8%, որը վերջին 5 տարիների համար ամենաբարձր ցուցանիշն է:

2021թ. մեկ ուսանողին ընկնող եկամուտների ծավալը կազմել է 510.3 հզ.դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է, 17%-ով ավելացել է մեկ ուսանողին ընկնող ծախսերի ծավալը՝ կազմելով 415.8 հզ.դրամ, ինչը պայմանավորված է ընդհանուր ուսումնական ծախսերի աճով:

Մասնաճյուղը մոտ 4 մլն դրամ է հատկացրել նաև գիտահետազոտական աշխատանքների վարձատրության լրավճարների և ներքին դրամաշնորհային ծրագրերի համար։

2021-22 ուստարում մասնաճյուղի կողմից տարբեր պատճառներով ուսման վարձի լրիվ և մասնակի զեղչեր են ստացել առկա և հեռակա ուսուցման համակարգի 388 ուսանող, որը կազմել է շուրջ 20 մլն ՀՀ դրամ։

• **Գրադարան:** Ուսանողների, դասախոսների և աշխատակիցների համար տեղեկատվության և անհրաժեշտ մասնագիտական և գեղարվեստական գրականության ձեռք բերման լայն հնարավորություններ է տրամադրում մասնաճյուղի գրադարանը։ Հաշվետու ուստարում գրադարանը գնման կամ նվիրատվության արդյունքում համալրվել է **775 անուն** հրատարակություններով՝ այդ թվում դասագրքեր, գիտական գրականություն, քարտեզներ, ամսագրեր և այլն։ Մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանն ազատ և մատչելի տարբերակով առաջարկում է **1054** էլեկտրոնային գիրք, նախորդ ուստարվա համեմատ՝ պահանջված և եզակի գրքերի թվայնացված **104** գրքով ավել։ Հաշվետու ուսումնական տարվա կարևոր ձեռքբերումը գրադարանում **«KOHA»** համակարգի գործարկում էր։ Ամբողջական էլեկտրոնային սպասարկման համար համակարգ են մուտքագրվել և էլքարտարանում հասանելի է առկա 20.353 գրականության կեսը։ ԵՊՀ գրադարանի աշխատակիցների կողմից իրականացվել է ԵՊՀ առցանց քարտարանում բացակա շուրջ 1000 անուն գրքի մուտքագրում։

Միայն 2021թ.-ին մասնաճյուղը ձեռք է բերել 621.000 դրամի գրականություն, որը 3.8 անգամ գերազանցել է նախորդ տարվա ծախսերը և վերջին 4 տարիների ամենաբարձր ցուցանիշն է։

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իր հավակնություններում ԵՊՀ-ն դիրքավորվում է որպես «հետազոտական համալսարան», և մասնաճյուղն էլ իր համեստ քայլերն է ձեռնարկում սեփական վարկանիշը որպես ուսումնագիտական կենտրոն բարձրացնելու ուղղությամբ՝ հետազոտական աշխատանքներով զբաղվող դասախոսական կազմին աջակցման և խրախուսման տարատեսակ միջոցառումներ և ծրագրեր իրականացնելու միջոցով։

2021-22 ուստարում Մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի կողմից հրատարակվել են 2 մենագրություն, 4 ուսումնական ձեռնարկ և 42 գիտական հոդված, ինչը նախորդ տարվա համեմատ 61%-ով ավել է։ Հրատարակությունների թվի աճը մենք նաև պայմանավորում ենք մասնաճյուղում ներդրված խրախուսման մեխանիզմներով՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2022 թվականի մարտին վերանայված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ի

հետևողական կիրարկմամբ և գիտական կոչումներով պայմանավորված աշխատավարձերի տարբերակմամբ:

Մասնաճյուղի դասախոսները և ուսանողներն ակտիվ մասնակցում են հանրապետական և միջազգային գիտաժողովների, մրցույթների և այլն: Իսկ հաշվետու ուստարին նշանակալից էր նրանով, որ 2022թ. մարտին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի նախաձեռնությամբ առկա և առցանց ձևաչափով իրականացվեց «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» միջազգային **երիտասարդական գիտագործնական համաժողովը**, որին մասնակցեց 17 երկրի շուրջ 140 երիտասարդ դասախոս և գիտնական, ուսանող: Համաժողովը եռալեզու էր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Միջազգային գիտապրակտիկ համաժողովի նպատակն էր խթանել ուսանողական հետազոտությունները, բացահայտել ուսանողների, ասպիրանտների ստեղծագործական ներուժը, զարգացնել ուսանողների և դասախոսների ներբուհական և միջբուհական համագործակցությունը, կենտրոնացնել երիտասարդության ուշադրությունը ժամանակակից մանկավարժական հետազոտությունների կարևորության վրա: Համաժողովի նյութերը հրապարակվել են առանձին էլեկտրոնային և տպագիր ժողովածուի տեսքով, որը համատեղ գրախոսել են հայ և ռուս մասնագետները: Կազմակերպիչների հավաստմամբ՝ այս համաժողովը “Project Ijevan Valey EdTech” երկարատև ծրագրի առաջին միջոցառումն է: Այն կդառնա պարբերական:

Մասնաճյուղի դասախոսների և ուսանողների մյուս նշանակալից ձեռքբերումը բնական գիտությունների ֆակուլտետում ձևավորված և գործող հետազոտական **“Green Ground” («Կանաչ հող»)** խմբի (1 դասախոս և 5 ուսանող) հաղթանակն էր ԵՄ-ի կողմից ներկայացված գյուղատնտեսական աշխատանքների աջակցության Ավստրիական գործակալության հայտարարած ստարտափի միջազգային դրամաշնորհների մթցույթում: “Green Ground” թիմի աշխատանքների հիմքում դրվել են ֆակուլտետի մի խումբ ուսանողների հետազոտական աշխատանքները, որոնք նվիրված էին բազմաֆունկցիոնալ թվաէլեկտրոնային կառավարմամբ չափիչ սարքերի ծրագրավորմանը, իսկ աշխատանքը նվիրված էր գյուղատնտեսական մշակաբույսերի աճի ընթացքում միկրոտարրերի յուրացման պրոցեսի չափմանն ու հսկողությանը: Այս աշխատանքի արդյունքները ներդրվում են Տավուշի մարզի մի քանի գյուղացիական տնտեսություններում:

Վերջին երկու տարիներին մասնաճյուղում հայտարարվում են հետազոտական աշխատանքների ներքին դրամաշնորհային մրցույթներ, որոնց ակտիվ մասնակցում են և՛ դասախոսները, և՛ ուսանողները: 2021-22 ուստարում հայտարարված մրցույթում հաղթող է ճանաչվել 5 թեմա: Հետազոտական նախագծերում ընդգրկված են եղել 11 հիմնական դասախոս (այդ թվում՝ 6-ը երիտասարդ) և 10 ուսանող: Մասնաճյուղի 5 դասախոս և շուրջ 50 ուսանող մասնակցում են Եվրասիա հիմնադրամի կողմից տրված դրամաշնորհային ծրագրին:

Մասնաճյուղն իր **2 երիտասարդ դասախոսների** ֆինանսական աջակցություն է ցուցաբերել Իտալիայի Վենետիկի Կաֆոսկարիի համալսարանում ուսումնառությունը շարունակելու նպատակով, **1 դասախոս** գործուղվել է Պորտուգալիայի Բրագա քաղաք Էրազմուս+ ծրագրի շրջանակներում Մինհոյի համալսարանում դասախոսություններ կարդալու, նույն դասախոսը գործուղվել է Հունաստանի Սալոնիկ քաղաք նույն ծրագրի շրջանակներում Արիստոտելի համալսարանում դասախոսություններ կարդալու նպատակով:

ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Որպես տարածաշրջանային ուսումնական հաստատություն մասնաճյուղը կարևորում է կազմակերպությունների և տարբեր շահակիցների հետ մարզային, հանրապետական և միջազգային մակարդակներում փոխհամագործակցությունը: Մասնճյուղը ակտիվորեն ներգրավված է Տավուշի մարզում տեղի ունեցող գրեթե բոլոր միջոցառումներին և հանդիպումներին:

Հաշվետու ուստարում Մասնաճյուղը հուշագրերի ու պայմանագրերի շրջանակներում համագործակցել է մարզային մակարդակով **10**, հանրապետական մակարդակով **10** և միջազգային մակարդակով 4 բուհերի և կազմակերպությունների հետ, որոնցից **11-ը** ստորագրվել են 2021-22 ուստարում: Այդ համագործակցությունները հետապնդում են կարևոր մի քանի նպատակ. նպաստել կրթական ծրագրերի բարելավմանը, ԵՊՀ ԻՄ-ի գիտական ներուժի զարգացմանը, Տավուշի մարզի կայուն զարգացմանը, ուսանողների և հասարակության համար կազմակերպել նեղ մասնագիտական անվճար դասընթացներ, ներառել ուսանողներին մարզում գործող տարբեր կազմակերպություններում և ընկերություններում՝ ապագայում աշխատանքով ապահովելու միտումով, իրականացնել ուսանողների հետազոտական և վերլուծական կարողությունների զարգացմանն ուղղված տարբեր գիտակրթական և սոցիալ-մշակութային համատեղ ծրագրեր, օգտագործել ոլորտային կազմակերպությունների ներուժը մասնագիտական դասընթացների արդյունավետ իրականացման և ուսանողների պրակտիկ կարողությունների զարգացման համար, աջակցել ուսանողներին կրթաթոշակների տրամադրման և ուսման վարձի մասնակի փոխհատուցման հարցերում և այլն:

Մարզային մակարդակով մասնաճյուղն ակտիվ համագործակցում է տարածաշրջանի 4 քոլեջների հետ, «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի, “Digital wave” ծրագրավորման ընկերության, «Տավուշ» մեդիա հեռուստաընկերության, Տավուշի մարզպետարանի, Իջևանի քաղաքապետարանի, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմի, «Հույսի կամուրջ» ՀԿ-ի, Իջևանի երկրագիտական թանգարանի, Տավուշի մարզային գրադարանի հետ և այլն:

Ոչ ֆորմալ կրթական ծրագրեր իրականացնելու շրջանակներում 2021 թվականին, ՀՀ ԿԳՄՍ նախարարության երաշխավորությամբ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը

հնարավորություն ստացավ կազմակերպելու ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ տարածաշրջանի ավելի քան ութ տասնյակ ուսուցիչների համար: Հաշվետու ուստարում Մասնաճյուղի ԿԲԴՎ բաժինը նաև վերանայել է վերապատրաստման ծրագրի մոդուլի 7 դասընթացների և 17 մասնագիտական առարկաների թեմատիկ պլաններն ամբողջությամբ: Ներկայացված մոդուլը երաշխավորվել է ԿԳՄՍ նախարարության կողմից, և 2022թ.-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին իրականացվել են հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 2-րդ վերապատրաստումները:

Հանրապետական մակարդակով ևս Մասնաճյուղն ունի համագործակցության լայն շրջանակ, այդ թվում մասնաճյուղն ակտիվ համագործակցում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, «Գլաձոր» համալսարանի, «Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպության, «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպության, «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»-ի, ՀՕՖ-ի և այլնի հետ:

Տնօրենի միջազգային կապերի գծով խորհրդական պրոֆ. Ս.Մինասյանի ջանքերվ Մասնաճյուղն ընդլայնել է նաև օտարերկրյա համալսարանների և կազմակերպությունների հետ իր համագործակցությունների շրջանակը: Հաշվետու ուստարում մասնաճյուղը սկսել է իր համագործակցությունը ԱՄՆ-ի Այովայի համալսարանի, Ռուսաստանի պետական մասնագիտական-մանկավարժական համալսարանի, «Հայ-ֆրանսիական բարեկամություն և փոխանակում» (AEFA) միության, ԱՄՆ-ում գործող “Armenian Volunteer Network” (AMVN-«Հայ կամավորական ցանց») կազմակերպության հետ: Այս համագործակցությունների շրջանակներում մասնաճյուղի դասախոսներն առցանց և առկա տարբերակով մասնակցում են տարբեր վերապատրաստման դասընթացների, ուսանողները մասնակցում են բանավոր հաղորդակցման հմտությունների զարգացմանն ուղղված տարբեր դասընթացների (օրինակ՝ իսպաներենի, ռուսերենի, ֆրանսերենի, անգլերենի) և այլն:

Հաշվետու ուստարում հետաքրքիր նախաձեռնության շրջանակներում առաջին անգամ մասնաճյուղում դասախոսների որակավորման բարձրացման ծրագրով վերապատրաստում է անցել Յանկա Կուպալայի անվան Գրոդնոյի պետական համալսարանի ռուս բանասիրության ամբիոնի դասախոսը, որի նպատակն էր արտասահմանյան բուհում ուսումնական գործընթացի կազմակերպման ուսումնասիրությունը, գիտական կապերի ընդլայնումը և Հայաստանի ու Բելառուսի միջև հետագա միջազգային համագործակցության հեռանկարային ոլորտների բացահայտումը: Նմանատիպ նախաձեռնության շրջանակներում «Ռուսաց լեզվի մագիստրոսներ 2022» մրցույթի հաղթող Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի մագրիստրոսը հնարավորություն է ստացել մանակավարժական պրակտիկա անցնել հայաստանյան բուհերում, այդ թվում նաև ԵՊՀ ԻՄ-ում:

Ավարտական աշխատանքների գիտական մակարդակի, տվյալների հավաքագրման և արդյունավետ վերլուծություններ կատարելու համար մասնաճյուղը համագործակցային հետաքրքիր նախաձեռնությամբ է հանդես եկել: Ամբիոններում ավարտական աշխատանքների թեմատիկան հնարավորինս ուղղորդվել է մարզային հիմնախնդիրների բացահայտմանը և դրանց համար լուծումների առաջադրմանը և որպես ավարտական աշխատանքների համաղեկավերներ և գրախոսներ ներգրավվել են ոլորտային կազմակերպությունների բարձրակարգ, արհեստավարժ մասնագետներ: Օրինակ, «Դիզայն» կրթական ծրագրի ավարտական աշխատանքների զգալի մասը նվիրված են մարզի տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների ինտերիերի և էքստերիերի մշակմանն ու արդիականացմանը, նույն ծրագրում ավարտական աշխատանքներ են իրականացվում Տերյան մշակութային կենտրոնի հետ համատեղ, նաև մարզի գլխավոր ճարտարապետի, Իջևան քաղաքի արվեստի դպրոցի տնօրենի ղեկավարությամբ: «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ավարտական աշխատանքների բոլոր թեմաները մարզային խնդիրների վերաբերյալ են, իսկ «Ֆինանսներ» կրթական ծրագրի մի շարք ավարտական աշխատանքներ ղեկավարում են ՀՀ կենտրոնական բանկի մասնագետները:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

Մասնաճյուղն իր ստորաբաժանումների գործունեության արդյունավետ կառավարումն ապահովում է համապատասխան գործիքակազմով, որն ապահովում է մասնակցային կառավարում: Շահակիցների ներգրավմանը և նրանց հետ ակտիվ համագործակցությունն ապահովելուն է միտված հաշվետու ուստարում մշակված և ներդրված «ԵՊՀ ԻՄ-կառավարման գործընթացում ուսանողների և դասախոսների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը», որի հիման վրա ապահովվել է ներքին շահակիցների մասնակցությունը կառավաչման մարմինների աշխատանքներին:

2021-22 ուստարին կարևորվել է ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա Մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրի և նրա իրականացման պլան ժամանակացույցի մշակումով և գործարկումով:

Կարևորելով նոր ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացումը Մասնաճյուղն մասնակցային քննարկումների արդյունքում պլանավորել է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, աշխատակիցների խրախուսմանը, աշխատանքների պլանավորմանն ու գործունեության հաշվետվողականությանն ուղղված գործողություններ և միջոցառումներ, անհրաժեշտ փաստաթղթերի մշակումներ:

Մշակվել է ռազմավարական ծրագրի կատարողականի գնահատման ընթացակարգը, կարևոր մի փաստաթուղթ, որում ներառված 5 փաստաթղթերն ապահովելու են ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքը, արդյունքների հավաքագրումն ու վերլուծությունը, ապա կատարողականի գնահատումը:

Նշենք, որ ստորաբաժանումները 2022թ.-ին աշխատում են ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցից բխող հաստատված աշխատանքային պլաններով և իրենց գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում տնօրինության և գիտական խորհրդի նիստերում:

Նշենք, որ կառավարման գործընթացների արդյունավետությունը մեծացնելու նպատակով վերապատրաստման հատուկ դասընթացներ են կազմակերպվել նաև մասնաճյուղի ստորաբաժանումների ղեկավարների, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատակիցների համար («Անձի ստեղծարարության զարգացումը մասնագիտական գործունեություն մեջ», «Աշխատանքային իրավահարաբերություններ, առկա խնդիրներ, աշխատանքային օրենսգրքի փոփոխություններ», «Աշխատանքային կամ պաշտոնական գործավարության տեքստերի պատրաստման հմտությունները» և այլն):

Բացի այդ համալսարանական գործընթացները կանոնակարգելու համար հաշվետու ուստարում մշակվել, վերանայվել և գիտական խորհրդում հաստատվել ու կիրակվում են 4 ծրագիր և պլան, 7 կանոնակարգ, 9 կարգ, 2 քաղաքականություն և մեկ տասնյակից ավել այլ փաստաթղթեր: Բոլոր գործընթացներում ապահովում է ՊԻԳԲ (պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում) շրջափուլի իրականացումը:

Մասնաճյուղի ռազմավարական գործունեության իրականացման, գործընթացների կառավարման և կանոնակարգման հարցերում ստորաբաժանումների հետ ակտիվ և արդյունավետ աշխատում է գիտական խորհրդին կից **Որակի կառավարման մշտական հանձնաժողովը**, որը քննարկում և Գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում գրեթե բոլոր կանոնակարգային փաստաթղթերը:

Հաշվետու ուստարում նոր խմբագրությամբ կիրառվում է ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը, որում ներդրվել է ուսանողների գնահատման նոր բազմագործոն համակարգ: Այս կարգի գործարկման շրջանակներում մշակվել և 2022թ.-ի ապրիլից ներդրվել է մասնաճյուղի ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման կարգը:

2021-22 ուստարվա երկրորդ կիսամյակում ըստ վերանայված աուդիտի կարգի իրականացվել է մասնաճյուղի բոլոր ամբիոնների գործունեության աուդիտ, մշակվել են մասնաճյուղի ստորաբաժանումների փաստաթղթերի օրինակելի ցանկեր՝ նրանց աշխատանքները ավելի համակարգված կազմակերպելու համար:

Ռազմավարական ծրագրի իրականացման պահանջներին համընթաց շուրջ մեկ տասնյակ փաստաթղթեր քննարկման փուլում են, որոնք, մասնավորապես, վերաբերում են լրացուցիչ կրթության կազմակերպման գործընթացին, գիտահետազոտական և ոլորտային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովմանը, գիտակրթական ծրագրերում ներգրավվելուն, շահակիցների հետ արդյունավետ հետադարձ կապի նոր մեխանիզմների ներդրմանը և այլն:

Մասնաճյուղի կառավարման առաջնահերթություններից է մասնաճյուղի տեսանելիության ապահովումը և վարկանիշի բարձրացումը: Այստեղ, բոլոր իրականացվող այլ գովազդային գործընթացների մեջ առանձնահատուկ տեղ ունեն մասնաճյուղի պաշտոնական կայքը և Ֆեյսբուքյան էջը, որոնք հանրությանը տրամադրում են հավաստի և լիարժեք տեղեկատվություն մասնաճյուղի գործունեության մասին:

Օտարալեզու հանրությանը մասնաճյուղի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի դարձնելու համար անգլերեն թարգմանվել են ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությունը, մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը և մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերի ցանկը, որոնք խմբագրվելուց հետո կտեղադրվեն կայքի անգլալեզու էջում:

Ուրախությամբ պետք է նշել, որ հայաստանյան լրատվական միջոցները պարբերաբար անդրադարձել են մասնաճյուղին և մասնաճյուղում կազմակերպվող տարբեր միջոցառումներին, որոնք տեղադրված են «ԶԼՄ-ները մեր մասին» էջում: Հաշվետու ուստարում կայքի «Ինֆորմացիա» բաժնում տեղադրվել են գիտաժողովներին, մրցույթներին և տարատեսակ միջոցառումներին վերաբերող շուրջ երեք տասնյակ հայտարարություններ և 80 նորություններ:

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներքին և արտաքին շահակիցների խնդիրներն ու կարիքները մշտապես գտնվում են մասնաճյուղի ղեկավարության ուշադրության կենտրոնում, այն ամրագրված է նրա ռազմավարական ծրագրում և կազմում է գործունեության անբաժանելի մասը:

Ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և արտաքին շահակիցների կարիքների վեր հանման համար մասնաճյուղում 2021-22 ուստարում վերանայվել են առցանց հարցումների հարցաշարերը և իրականացվել են **7 առցանց հարցում,** նաև ֆոկուս-խմբերով հանդիպում-քննարկումներ (օրինակ՝ պրակտիկայի մասնակից ուսանողների, բոլոր ավարտական կուրսերի ուսանողների հետ): Հարցումների արդյունքները վերլուծվելուց հետո քննարկվել են Գիտական խորհրդում և հրապարակվել: ՌԾ-ի պահանջներին համահունչ մշակվել են հետազոտության **գործիքի 5 անձնագրեր**: Հաշվետու ուստարվա ընթացքում հավաքագրված ուսանողների և դասախոսների կարիքները քննարկվել են տնօրենության նիստերում, 2022թ.-ի սեպտեմբերին կազմվել է խնդիրների և կարիքների փաթեթ, իսկ ստորաբաժանումները կազմել են հասցեագրված խնդիրների լուծման ծրագրեր:

Մասնաճյուղը կարևորելով իր գործատու-շահակիցների կարծիքները պարբերաբար իրականացնում է իր շրջանավարտների մասնագիտական որակների վերաբերյալ նրանց կարծիքի ուսումնասիրություններ: Հաշվետու ուստարում առցանց հարցմանը մասնակցել և իրենց կարծնիքներն ու առաջարկներն են գրել 73 գործատու: Նրանք բարձր են գնահատել մեր մասնաճյուղի շրջանավարտների գիտելիքները,

մասնագիտական և տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետելու հմտությունները, թիմային աշխատելու ունակությունները, տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները և այլն:

Համեմատաբար ցածր են գնահատվել շրջանավարտների գործնական հմտությունները, թիմային աշխատելու կարողությունները և մասնագիտական խոսքը: Քննարկումներից հետո դասախոսներին առաջարկվել է կիրառել ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումները, ուսումնառությունը կազմակերպել խնդիրների, նախագծերի և թիմային աշխատանքների վրա, ուսանողներին դարձնել ուսումնական գործընթացի հիմնական դերակատար՝ իր տեսակետներով և լուծումներով, նրանց մոտ զարգացնել առաջնորդելու, ղեկավարելու և պատասխանատվություն կրելու ունակություններ:

Նշենք նաև, որ 2021-22 ուստարվա երկու կիսամյակներում իրականացված «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ» ուսանողական հարցման արդյունքները բավականին բարձր են և միջին գնահատականը բոլոր ֆակուլտետների համար բարձր է **4.5-ից**:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մասնաճյուղն աջակցում է իր ուսանողների ուսումնական, գիտամշակութային, սոցիալական և սպորտային բոլոր նախաձեռնություններին, խրախուսում է նրանց բոլոր ձեռնարկումները: Պետք է նշել, որ հաշվետու ուստարում ուսանողների արտալսարանային կյանքը եղել է բավականին հագեցած և բովանդակալից: Ուսանողական կառույցների հետ համատեղ ուսանողների ստեղծագործ մտքերի և ցանկությունների դրսևորման, տոնական միջոցառումների կազմակերպման հաճելի միջավայր են ապահովել ֆակուլտետները, մասնաճյուղում գործող լեզուների 3 կենտրոնները, գիտելիքի նորարարական հաբը, «Ամերիկյան գրադարան և դասընթացների» կենտրոնը և մասնաճյուղի գրադարանը:

2021-22 ուստարում մասնաճյուղի ամբիոններն ուսանողների համար կազմակերպել են կրթության, հետազոտության, ժամանակակից մարտահրավերների, աշխարհում տիրող իրավիճակի, ազգաբնակչության հոգեբանական վիճակի և հոգեբանության արդի հիմնահարցերի վերաբերյալ շուրջ 15 հանդիպում-քննարկումներ, սեմինարներ և այլընտրանքային դասախոսություններ: Այս միջոցառումների շարքում առանձնացնենք 2021թ.-ի դեկտեմբերին մասնաճյուղում կայացած «Հայացք կրթությանը և դաստիարակությանը Ճապոնիայում, Ֆինլանդիայում, Ռուսաստանում և Հայաստանում. միջմշակութային ասպեկտ» թեմայով **միջազգային առցանց բաց դասն** այդ երկրների առաջատար համալսարանների պրոֆեսորների մասնակցությամբ:

Մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնն ավանդույթ է դարձրել հանդիպումներն իր հաջողակ շրջանվարտների հետ, որի ժամանակ նրանք ներկայացնում են հաջողության հասնելու իրենց փորձը՝ կարևորելով մասնաճյուղում իրենց ստացած գիտելիքները, հմտություններն ու կարողություններն ապագա կարիերայի ձևավորման գործում: Միայն

հաշվետու ուստարում «Ամերիկյան գրադարան և դասընթացների» կենտրոնում կազմակերպվել է 4 հանդիպում-քննարկումներ շրջանավարտների հետ:

Գիտելիքի նորարարական հաբում հաշվետու ուստարում կազմակերպվել են վերապատրաստման մեկ տասնյակից ավել դասընթացներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, հանդիսավոր արարողություններ, նաև բնապահպանական և այլ բնույթի դասընթացներ:

Ֆրանսերենի ուսուցման կենտրոնը, բացի ուսումնառության վայր լինելուց նաև դարձել է «Հայ-ֆրանսիական բարեկամություն և փոխանակում» միության ներկայացուցիչների հետ հաղիպումների և միջոցառումների վայր:

Անգլերենի ռեսուրս կենտրոնում մշտապես անգլերենի դասեր են անցկացվում՝ գործածելով հարուստ գրականությունը և լսողական հնարավորությունները:

2022թ. հունիսին ամփոփվել են ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ և գրադարանի աշխատակազմի աջակցությամբ իրականցված «Բացահայտենք մեր գրադարանը /VOL2/» գործնական-ճանաչողական ծրագրի արդյունքները: Ավելի քան մեկ ամիս տևած ծրագրի շրջանակներում ուսանող-կամավորներից բաղկացած առանձին մասնագիտական խմբերը ուսումնասիրել են մասնագիտական գրականությունը, ըստ ենթաբաժինների առանձնացրել են գրքերը, մաքրել են և վերադասավորել:

Ընդհանուր առմամբ ուսանողների մասնակցությամբ և ուսանողական կառույցների նախաձեռնությամբ մասնաճյուղում կազմակերպվել են գրական-երաժշտական, գրական-գեղարվեստական միջոցառումներ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյա հոբելյանին, Սուրբ Հարության տոնին, Ուիլյամ Շեքսպիրի ծննդյան 458–ամյակին, Ֆ.Մ.Դոստոևսկու ծննդյան 200-ամյակին, Պատմաբանի օրվան, գիրք նվիրելու օրվան, հայրենիքի անմահացած քաջ հայորդիների սուրբ հիշատակին և այլն:

Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողները հաշվետու ուստարում կազմակերպել են ցուցահանդես նվիրված մայրության և գեղեցկության տոնին, որում ընդգրկված են եղել 23 ուսանողների 124 աշխատանքներ, գիրք նվիրելու օրվան նվիրված ցուցահանդես-միջոցառում, նաև «Մշակութային շարժում» նախագծի ընթացքում իրականացրած աշխատանքների ցուցահանդես, մասնակցել են 2022թ.-ի մայիսին «Ռեստարտ» գիտակրթական-բարեգործական հիմնադրամի կողմից Իջևանում կազմակերպված **#RestArtYouthFest** երիտասարդական փառատոնի ընթացքում կազմակերպված ցուցահանդես-տոնավաճառին:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի ուսանողները գրանցել են մի շարք հաջողություններ և՛ գիտության, և՛ կրթության, և՛ սպորտի բնագավառում:

2022թ. ապրիլին Ռուսաստանի Բ.Ն.Ելցինի անվան Ուրալի դաշնային համալսարանում ասպիրանտների և ուսանողների համար տեղի է ունեցել «Լեզուն մասնագիտական հաղորդակցության ոլորտում» **XXIV միջազգային գիտագործնական գիտաժողովը**: Գիտաժողովի մրցութային փուլին իրենց գիտահետազոտական

նախագծերով հանդես են եկել «Ռուսաց լեզու և գրականություն» ծրագրի 1-ին կուրսի 2 ուսանողներ, որոնք հավաքելով ամենաշատ միավորներ դիպլոմներ են ստացել «Լավագույն տեսական հետազոտություն» և «Լավագույն գործնական հետազոտություն» անվանակարգերում։

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի մի քանի ուսանողներ 2021թ.-ի օգոստոսին մասնակցել են իսպաներենի անվճար առցանց դասընթացի և 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի վերջին 2 ուսանողներ հանձնել են իսպանալեզու աշխարհին հայտնի Սերվանտեսի ինստիտուտի իսպաներենի A1 մակարդակի թեստը և ստացել են հավաստագրեր: Մեր ուսանողները մտադիր են հաղթահարելու նաև հաջորդ մակարդակը։

Մասնաճյուղի «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողը «2021 թվականի լավագույն ուսանող» անվանակարգում Մ.Վ.Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի կողմից արժանացել է դիպլոմի և մեդալի։

2021թ. հոկտեմբերին Հունաստանի Սալոնիկ քաղաքում կայացած սամբոյի աշխարհի պատանեկան ու երիտասարդական առաջնությունում մասնաճյուղի ուսանողը նվաճել է արծաթե մեդալ։

Մասնաճյուղի ՈՒԳԸ-ն ակտիվ համագործակցում է Մայր բուհի ՈՒԳԸ-ի հետ և պարբերաբար մեր ուսանողները մասնակցում են ԵՊՀ-ում կազմակերպվող ուսանողական գիտաժողովներին։ Հաշվետու ուստարվա հոկտեմբերին մասնաճյուղից 1 ուսանող զեկուցմամբ հանդես է եկել ԵՊՀ ՈՒԳԸ 75-ամյակին նվիրված ԵՊՀ ՈՒԳԸ 8-րդ միջազգային գիտաժողովում։

Մասնճյուղի աշխատակազմը գիտակցում է Մայր բուհի միակ մասնաճյուղը լինելու պատիվը և մեծ պատասխանատվությունը, և, ստանալով ԵՊՀ-ի բազմակողմանի աջակցությունը, կշարունակի արդյունավետ լուծել իր առջև դրած խնդիրները՝ դառնալով տարածաշրջանի ուսումնագիտական եզակի կենտրոն։

Ա.Մակարյան ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար
Ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ